



Յ. Յ. ՄԱՅԹԻՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՈՅՆ ՀԱՅՈՑ

Բարձր Հոգիամուտ Հայոց Ազգ. Ընկ.



Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս
ՄԱՏԹԷՈՍ Բ.-ը 1910 թուի Դեկտեմբերի
11-ին հանգեաւ ի Տէր և նոյն ամսի 19-ին
ամփոփուեց ս. Էջմիածնում:

Հայոց Ազգազրական Ընկերութիւնը
ողբում է ոչ միայն իւր սիրելի ՀՈՎՈՒԱ-
ՊԵՏԻՆ, այլև իւր ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՈ-
ՂԻՆ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՏԹԷՈՍ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ Աճճասանելի կամօքն Ասուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք Համագգական Նախամեծաւ Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի պատուական Տեարց Անդամոց Ազգազրական Ընկերութեան Հայոց Տփխեաց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս բազմասցի ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Ընկալաք զգիր գերազնիւ նախազահի ընդհանուր ժողովոյ Ընկերութեանդ, զթուագրեալն յ17 ամսեանս ապրիլի, որով խնդրէ զհովանաւորութիւն Հայրապետի համայն Ազգիս՝ ի խրախոյս և ի յառաջագիմութիւն ազգօգուտ Ընկերութեանդ: Որդեակք Մեր հոգեորք, յայտ է ամենեցուն, եթէ դոյնօրինակ հանրօգուտ գործ Ընկերութեանդ ոչ միայն փափաղելի և ըղձալի, այլ և յոյժ հաճելի է Մեզ, որպէս և համայն բանիմաց անդամոց բազմակարօտ Ազգիս, քանզի ժողովուրդն և երկիրն Մեր ճոխ են գանձուք հրեւոթեան և ազգային պատուական յիշատակարանօք, որք ծածկեալ և ճառացեալ կան առանց հետազօտութեան և ուսումնասիրութեան: Յոյժ մխրթարիմք, յորժամ տեսանեմք, զի շնորհիւ եռանդազին ջանից Ընկերութեանդ՝ ժողովրդական բանահիւստութիւն, ազգային հնութիւնք, հովորոյթք ընտանեկան և ազգային կենցաղոյ հետախուղեալ և հետազօտեալ՝ ի յայտ ածին և լինին սեպականութիւն գիտութեան՝ վասն ուսումնասիրութեան ի ձեռն հնազէտ և գիտական անձանց: Ամենայն գովութեան և խրախուսանաց արժանի համարելով զգործունէութիւն Ընկերութեանդ, որ աշխատ լինի զծածկեալ գանձս հոգեկան կենաց Ազգիս ի յայտ ածել և համախմբել, և առեալ զԱզգազրական Ընկերութիւն Հայոց ընդ հովանաւորութեամբ Մերով, այսու Հայրապետական կոնդակաւ օրհնեմք զհամայն անդամս Ընկերութեանդ և մաղթեմք առ Տէրն՝

պարգևել ամենեցունցդ կար և զօրութիւն նովին եռանդեամբ
շարունակել զազգօգուտ գործ Ընկերութեանդ ի յառաջադիմու-
թիւն Ազգիս:

Ողջ լիւրութ, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ, Ամէն:

ՄԱՏԹԷՈՍ Բ.

Կաթուղիկոս Ամենայն Հայոց

27 ապրիլի 1910 ամի

և ըստ Տոմարիս ՌՅԾԹ

ի հայրապետութեան Մերում Ա. ամի

Արարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վահարճապատ Թ. 1168